№ 208 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 1903 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 № 208

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ»
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է՝ ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 258.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Տեղական պայմանների և պահանջների նշանակութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ստաւրոպոլից. Նամակ Արմաւիրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ինչ է կատարվում Մակեդոնիայում. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դէպի Արարատ։

## ՏԵՂԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Շատ տեղ գանգատվում են, որ երկաթուղու գծեր շինելու ժամանակ խիտ բնակեցրած տեղերը անտես են առնված և կայքերը երթեւեկում են ամայի դաշտերով և անապատներով կամ այնպիսի ձորերով ու անտառներով, որտեղ կեանք չը կայ և արդիւնագործութիւն չը կայ։ Երկաթուղի շինելու միջոցին ինժեներները գլխաւոր իրանց հոգսը այն բանի վրա են լինում կենտրոնացրած, որ գիծը կարելիին չափ կարճ լինի և էժան նստի, իսկ միւս կարեւոր պայմանները թողնում են առանց ուշադրութեան, օրինակ այն, թէ որքան ներելի է այս և այն վաճառանոցը կամ կենտրոնական կէտը թողնել գծից դուրս։

Երկաթուղին երբեք այնպէս էժան չէ շինվում, ինչպէս որ պէտք է շինվէր, ծախքը դուրս է գալիս դարձեալ մեծ, մինչդեռ տեղական կարեւոր կէտերը մնում են վանդված երկաթուղային գծից և տնտեսական կեանքին տրվում են այնպիսի հարուածներ, որոնք երբեմն լինում են արմատապէս կործանիչ։

Եւ զարմանալի չէ, եթէ երկաթուղին յաճախ չէ տալիս այն օգուտները, որ նրանից սպասում էին թէ ազգաբնակութիւնը և թէ երկաթուղային վարչութիւնը։ Երբ որ անյարմար հաղորդակցութեան շնորհիւ երթեւեկութիւնը սահմանափակ է, արդիւնագործութիւնը ճնշված է և ապրանքների քանակութիւնը չէ աճում արագ կերպով, հասկանալի է, որ երկաթուղին անկարող է տալ սպասված օգուտները և շատ դէպքերում տալիս է նոյն իսկ դեֆիցիտներ։

Մի շարք երկաթուղիներ ներկայումս չեն կարողանում ծածկել իրանց ծախքերը և կառավարութիւնը զբաղված է այն հարցով, թէ ինչ եղանակով պէտք է դարձնել նրանց արդիւնաւէտ։ Նոյն իսկ խնդիր է ծագել մի քանի գծեր ենթարկել որոշ փոփոխութիւնների և ճիւղաւորել նրանց, որպէս զի արդիւնաբերական կէտերը կապողական տնտեսական շրջանդարձութեան մէջ մտնել աւելի լաւ կերպով։

Արդեօք իրականութեան մէջ կը տեսնե՞նք բարեփոխութիւն, թէ պէտք է շարունակվի նախկին գործավարութեան եղանակը և նոր երկաթուղիների շինութիւնը դարձեալ պէտք է մի շարք սխալներ անի, որոնց մասին յետոյ միայն կարդանք ուշացած քննադատութիւններ և լսենք աւելորդ ողբեր։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՍՏԱՎՐՈՊՈԼԻՑ

Սեպտեմբերի 17-ին

Երէկ, այստեղի հասարակական ժողովարանի դահլիճում, տեղական հայ սիրողներից բաղկացած երկու սեռի խումբը՝ խմբապետ պ. Ազատ Մանուկեանի ղեկավարութեամբ տուեց հայկական համերգ, որ մեծ նորութիւն էր այստեղի ոչ միայն օտար, այլ և հայ հասարակութեան համար։ Համերգը, որ բաղկացած էր 12 ժողովրդական և ազգային երգերից և բաժանված էր երեք մասերի, սկսվեց պ. Եղիազարեանի ներդաշնակած աւանդական «Մեր Հայրենիքով»։ Երգերը մեծ մասամբ հանգուցեալ Կարա-Մուրզայի մշակած և իր պատրաստած խմբապետների ձեռքով զանազան տեղերում տրվող համերգներում կրկնվողներից էին՝ բացառութեամբ մի քանիսի, որ պ. Մանուկեանի մշակածներից էին։ Համերգը ընդհանրապէս բաւական աչքի ընկաւ։ Տիկին Մարիամ Տէր-Ցովհաննիսեան, որ թէև փոքր, բայց դիւրեկան ձայն ունի, շատ շնորհալի սոլօ երգեց «Իմ սիրելի զաւակունքս», «Արաքսի արցունքը», «Ախ, իմ սիրեկան»։ Դաշնամուրի վրա դաշնակցում էր Ս. Հ. Շվարց։

Ինչպէս ասացինք, այս համերգի երգերից շատերը զանազան տեղերում յաճախ կրկնվողներից էին։ Բայց այդ երգերը հայրենիքից դուրս, հեռու, օտար տեղերում, մանաւանդ այստեղ, հիւսիսում, բոլորովին ուրիշ տեսակ են հնչում։

Այս համերգը հայրենիքի ողջոյն էր, որ պ. Մանուկեանը բերել էր օտարացող հայերին, հարազատ մօր համբոյր... Երբ մէկը միւսի ետևից ներդաշնակ հնչում են «Ալագեազ բարձր տեղ է», «Բեզի մեռնիմ, Էջմիածին», «Մայր Արաքսի ափերով», «Շողեր-ջան», իսկոյն առաջդ պատկերանում են հայրենի գեղեցիկ լեռներն ու ծաղկալից բլուրները, վաղորդեան ժամին ցողապատ մարգերում կամ օրգաւէտ ու մարմանդ վայրերում «Ջան-գիւլում» առող և ծաղիկներ փնջող՝ դաշտային ծաղիկների թագուհի Շողեր-ջանը, հայ պատմական յիշատակներն ու սրբավայրերը, «Մայր Արաքսը», որ ամբողջ երկրի արցունքը ժողոված տանում, թաղում է ծովում... Եւ այդ հայակապ տեսարանի խորքում՝ այդ երգերի հեղինակ՝ մաճը բռնած հայ անաղարտ գիւղացին, որը իր բանուկ և հուժկու բազուկներով մշակված դրախտ դարձնելով Արարատեան դաշտը՝ հէնց դրանով անսպառելի կերպով լուծում է՝ Շիրակը և Անին այցելած տուրիստներին զբաղեցնող պրօբլէմը, թէ ինչ կուլտուրական ույժ և ոյժ կարող էր միջին դարերում անապատի մէջ մի Անի ստեղծել...

Զմայլված նայում էք՝ մարդու մտքին և սրտին շատ բան ասող՝ այդ հայրենի տեսարանին և ձեր սիրտն ու հոգին լցվում է մի աստուածային, վեհ ակկորդով...

Այո, լսելով հայ գիւղացու արտադրած պարերգն ու մելոդիան՝ դուք ցնցվում և վարակվում էք նրա ոգով. սրտակից և ոգեկից էք դառնում հայ գիւղացու յաւէտ կենդանի, զօրեղ և ստեղծագործող ոգուն։ Ուրեմն յաւերժ յիշատակ մեր խմբական երգի հիմնադիր Կարա-Մուրզային, որ մեր ժողովրդական անաղարտ ու անարուեստ երգերը մշակելով մտցրեց օտարացած սալոնները. կեցցեն նրա պատրաստած խմբապետները, որ նրա մեծ գործը անդադրում կերպով շարունակում են... Արդեօք ժամանակ չէ, որ մեր բոլոր խմբապետները իրանց երգեցիկ խմբերով փոխադարձ կապ հաստատեն միմեանց հետ՝ համերաշխ ծրագրով գործելու և ազգայնում խմբական երգեցողութեան ընկերութեան հիմքը դնելու. նպատակայարմար չէ, արդեօք, որ այդ երգեցիկ խմբերը ամառները միանային այս կամ այն մեծ կենտրոններում՝ մեծ և հանդիսաւոր համերգներ տալու հարիւրաւոր, հազարաւոր հոգով... Եւ երբ կը կատարվի այդ երազը...

Ահա այսպիսի զգացմունքներ և մտքեր էին պաշարել ինձ, երբ պ. Մանուկեանի համերգի վերջին ակկորդները մարեցին և նրանց հետ օտարացած հայերը ամեն բան մոռացան. իսկոյն աթոռները դուրս տարան դահլիճից և երջանիկ զոյգերը սկսեցին վալսն ու մազուրկան՝ չը նայելով, որ նրանցից շատեր արտօնջացել էին համերգի դէմ։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ

XVIII

Մենք նախօրօք վճռել էինք մնալ այդ օրը Սարդար-Բուլախում՝ թէ հանգստանալու և թէ գլխաւորապէս նախապատրաստութիւններ տեսնելու հետեւեալ օրվայ վերելքի համար։ Կանուխ առաւօտվանից, երբ մենք դեռ քնած էինք մեր ընդարձակ, գեղեցիկ վրանում,—որ գնված էր Պարսկաստանում և կրում էր դրան վերեւում Առիւծի և Արևի զինանշանը,—տեղական պրիստաւի կարգադրութեամբ հաւաքվել էին վրանի շուրջը բազմաթիւ քրդեր և բարձրացրել ամբոխային աղմուկ-աղաղակ։ Ես զարթեցի և դուրս եկայ վրանից։ Մեծ մասամբ միջահասակ ու քիչ թէ շատ նաև երիտասարդ քրդեր, թուխ, արևառ դէմքերով, փաթաթված չալից գործված հնոտի կիսավերարկուների մէջ, մաշված, խունացած «հաղամաներ»-ի կոյտեր գլուխներին, կապոյտ ու սպիտակ կտաւից կարված կարճ վարտիկներով ու պատառոտուն քօշերով և տրեխներով—նրանք խղճալի պատկերութիւն էին գործում նայողի վրա։ Այո, ամբոխը ամեն տեղ խեղճ է ու մերկ, սկսած Արարատից մինչև Սիբիրիայի խորին ձիւները, սկսած քրդերից մինչև էսկիմօսները. ես այդ գիտէի, բայց խեղճութիւնն էլ ունի իր... աստիճանները. ես չը գիտէի, որ Արարատի քրդերը հասել են խեղճութեան այդ ստոր, այդ ցաւալի աստիճանին։ Թէ դրանք գուցէ ջոկովի խեղճեր էին,—քրդական ամբոխի տականքը,—որ օրական մի րուբլի վարձի հրապոյրով ժողովվել էին Արարատի առցարանները բարձրանալու կիսամերկ ու կիսաբոբիկ... Քրդական ամբոխի մէջ կային և մի քանի «բէկեր», կապոյտ և սև մահուդից կարված նոր «չուխաներով», գլխի նոր փաթաթաններով, նոր կօշիկներով, խէնջալների արծաթապատ պատեաններով։ Նրանք եկել էին աւելի «թամաշա» անելու, քան գործի։ Մի երկուսը նրանցից բաւական սահուն կերպով խօսում էին ռուսերէն։ Սիրտ առած իմ կարեկցական հարցերից Մասիսի քրդերի աղքատութեան ու խեղճութեան մասին, «բէկերից» մէկը սկսեց դառնապէս գանգատվել։

—Հէյ վախ—սրտի խորքից հառաչեց քիւրդ «հայրենասէրը»—քրդերը կորան, փչացան. ո՞ւր են հիմա առաջվան քրդերը, ո՞ւր են նրանց բազմաթիւ հօտերը, չքեղ վրանները։ Ո՞ւր են հիմա քիւրդ քաջերը։ Քրդերի ահից ու երկիւղից առաջ ո՞վ կարող էր մօտենալ Արարատին։ Հիմա... նայեցէք այս ամբոխին. մերկ, վախկոտ՝ շատերը նրանցից պատրաստ են օրական մի երկու շահիով, մի փոր հացով ուրիշի գերին դառնալու. շատերը նրանցից տարին անց են կացնում մի քանի տասնեակ ոչխարից ստացված չնչին արդիւնքով, մի օր կուշտ, մի օր անօթի...

—Բայց ինչու, ինչ պատճառով հիմա այդպիսի խեղճացել են քրդերը, հետաքրքրվեցի ես։

—Ինչ պատճառով... ով գիտէ։

Քիւրդ բէկը լռեց. նա, երեւի, այդ «ինչ պատճառով»-ի մասին շատ քիչ էր մտածել իր կեանքում։

—Ժամանակը վատ է,—մի րոպէ լռելուց յետոյ՝ յանկարծ մի գիւտ արածի նման, բացականչեց «բէկը»—ժամանակը վատ է։ Այ, ուրիշ բան է Արարատի միւս կողմում—Բայազէդում, Մակուում. այնտեղ քրդերը առաջվայ նման քաջ են ու հարուստ... Այնտեղ նրանք ազատ են, չունեցած ժամանակն էլ...

Քիւրդ բէկը մի սուր հայեացք գցեց իմ երեսին։

—Դուք, պարոն, հայ էք։

—Հայ եմ։

—Հա... հըմ... ժամանակը վատ է, այ թէ ինչու... ծամծմեց քիւրդ «հայրենասէրը» իր խօսքը. բայց ես իմ մտքում արդէն լրացրի նրա կիսատ թողածը...

—Այո, ժամանակը վատ է, համաձայնեցի ես քիւրդ բէկի հետ, բայց, ի հարկէ, բոլորովին ուրիշ մտքով...

XIX

Թէյից յետոյ մենք դուրս եկանք շրջելու Սարդար-Բուլախի շրջականերում։ Օրը ամպամած էր. փչում էր ցուրտ քամի. Աւագ Մասիսի գագաթը ծածկված էր ամպերի մութ մառախուղով, որ երբեմն ցրվում ու բաց էր անում լերան յաւերժ վրա ընդ միշտ դիզված ու միացած ձիւների սպիտակութիւնը և երբեմն նորից խտանում ու կորցնում մեր աչքից Մասիսի վիթխարի զանգվածի կէսից աւելին։ Փոքր Մասիսի գլխից արագութեամբ սահում անցնում էին մութ-սպիտակաւուն ամպեր՝ քերելով երբեմն նրա լերան գագաթնամերձ լանջերը։ Եղանակը ոչ մի լաւ բան չէր խոստանում մեզ. եթէ նա շարունակէր այդպէս անողորմ մնալ մի քանի օր եւս, Արարատի վերելքը կը դառնար մի երազ, անիրագործելի մի ցնորք միայն։ Ո՞վ կը համարձակէր մութ ամպերի ահաւոր կոյտերի մէջ կոխել իր գլուխը, դնելով ոտները նոյնքան ահաւոր ձիւնակոյտերի վրա։

Տխրած, «կիսայուսահատ» դրութեան մէջ, մենք գնացինք նայելու այն անտառը, որ երեւում էր Փոքր-Մասիսի ստորոտում։ Սահմանապահ զօրքերի կայարանը, որի առաջ խփած էր մեր վրանը, հազիվ մի $1/2$ վերստ հեռու է այդ անտառից։ Մենք շուտով հասանք նրան։ Անտառ. դա շատ մեծ անուն է այն մի բուռն կարճահասակ, խղճալի թփուտների համար, որոնց տերևները մրոտում ու դողդողում էին ցրտաշունչ քամուց։ Որքան մենք կարողացանք նկատել, նրանք բռնում էին ոչ աւելի քան մի-երկու տասնեակ օրավար տարածութիւն Փոքր-Մասիսի հիւսիս-արեւելեան լանջի վրա. հեռու երեւում էին մացառուտների աւելի փոքր, աւելի չնչին խմբեր, որոնք, երևի, բաղկացած էին նոյն թփուտներից և մի օր իրար հետ միասին կազմում էին մի մեծ, անտառի անուանն արժանի, լայնատարած ծառաստաններ։ Թփուտների այդ փոքրիկ պուրակն անգամ տեղ-տեղ, իր միջավայրերում, արդէն ոչնչացել էր և հին վիրաւոր զինուորի նման բացել իր վէրքերը—Փոքր Մասիսի փխրուն աւազուտները։ Կացնի խուլ հարուածներից, որոնց ձայնը մեզ հասնում էր հեռուից, կարելի էր անսխալ գուշակել, որ մի օր և է քիւրդ շրջակայ օբաներից կամ գուցէ նաև զինուոր սահմանապահ կայարանից, անգութ աշխատում են աւելացնելու պուրակի վէրքերը. և համարձակ կարելի է ասել, որ մի 10—15 տարուց յետոյ՝ թփուտների խղճուկ անտառակը այլ ևս չի դիմանայ այդ վէրքերին ու իր վերջին հրաժեշտը կը տայ աշխարհին, մի վաղանցուկ յիշատակ միայն թողնելով փոքրաթիւ ճանապարհորդների նկարագրութիւնների մէջ...

Սակայն կար ժամանակ, երբ այդ անտառը, ինչպէս և ամեն մի թզաչափ հող Մասիսի ստորոտներում, տեսել էր աւելի երջանիկ օրեր։ Աբիխի ասելով, այժմեան անյայտացող թփուտները մի օր, թերև յայն կամար, ծածկում էին Փոքր-Մասի ստորոտը և կազմում խիտ անտառներ։ Դեռ 1844 թւականին, նոյն գիտնական ճանապարհորդի ասելով, նրանք հասնում էին մինչև Սարդար-Աղբիւրը, այն ինչ այժմ այս վերջինի և անտառակի մէջ ձգվող բաց ու բոլորովին մերկ տարածութիւնը մի վերստից աւելի է։ Պարզ է, ուրեմն, որ այս դարաւոր, անգնահատելի, մի ժամանակ ահագին տարածութեան վրա բուսած կամ գուցէ օր և է նախարարի կամ արքայի ձեռքով տնկված միակ անտառը մօտ է իր շունչը փչելուն։ Խեղճ անտառ... Արդեօք իրանց մօտալուտ մահը չէին ողբում այն թփուտները, որոնց խուլ, տխուր հառաչանքը մի նոյնպիսի խուլ, տխուր արձագանք էր կրկնում իմ սրտում...

XX

Քիւրդ «բէկերից» մէկը առաջարկեց մեզ գնալ տեսնելու այն օբաները, որոնք հեռու չէին մեր վրանից։ Մենք ուրախութեամբ ընդունեցինք նրա հրաւէրը և հաւաքվելով միաս-

Բայց և այնպէս չնորհակալութիւն պ. Մանուէլեանին, տիկին Մ. Տէր-Յովհաննիսեանին, խմբին մասնակցող բոլոր օրիորդներին և երիտասարդ պարոններին և նոր ընծայ Սահակ քահանայ Տէր-Յովհաննիսեանին, որ ամէն արգելքի յաղթեցին և այս համերգը գլուխ բերին. յուսով ենք, որ սա վերջինը չի լինի։ Միայն ցաւալի է, որ մօտ 120 տուն հարուստ հայերը չէին լցրել համերգի դահլիճը, որը կիսով չափ դատարկ էր. ցաւալի է, մանաւանդ, որ այստեղ անձնական հաշիւը դեր է խաղացել։ Ժամանակ է, որ կրքերը լռեն, և բարի ու վսեմ գործերն ու ձգտումները տիրապետեն... Ուսանողները եկել և հաւանում էին, իսկ մերոնք, որ կարող էին դահլիճը լցնել, զլացել էին այդ անելու... Ընդհանուր մուտք եղաւ մօտ 150 րուբլի, որից եթէ դուրս գալու լինենք դահլիճի և երաժիշտ Շմարցի վարձատրութիւնը և այլ ծախսեր՝ մօտ 90 ր. կը մնայ պ. Մանուէլեանին, որը գնում է Պետերբուրգ կատարելագործվելու։ Գէթ այս հանգամանքը պէտք է աչքի առաջ ունենար Սեւաստոպոլի հայ հասարակութիւնը։

Սոլլիւմեան

## ՆԱՄԱԿ ԱՐՄԵԱՆՍԿԻՑ

—

Սեպտեմբերի 1-ին

Ղրիմի փոքրիկ քաղաքներից մէկն է Արմեանսկը կամ, աւելի ճիշդը՝ Արմեանսկի-Բազարը, որի նախկին անունը Օրբազար էր։ Նա գտնվում է Ղրիմի հիւսիսային մասում, Սև և Ազով ծովերը իրարից բաժանող նեղ տարածութեան վրա (որի լայնութիւնը 7 վերստ է) Պերեկոպ քաղաքից չորս վերստ հեռու։ Պետական հաստատութիւնների մի մասը գտնվում է Պերեկոպում, մի մասն էլ այստեղ, բայց բոլորն էլ Պերեկոպի անունով են կոչվում. օրինակ քաղաքային վարչութիւնը Արմեանսկումն է գտնվում, բայց կոչվում է Պերեկոպի քաղաքային վարչութիւն. դատարան էլ Պերեկոպի անունով է կոչվում։

Արմեանսկի բնակչութիւնը կազմում են՝ հայեր, ռուսներ, թիւրքեր, հրեաներ, կարայիմներ (Թրքախօս հրէաներ ?) և այլն։ Արմեանսկ անունը լսելով, երևի ընթերցողը պիտի կարծէր, թէ սա մի հայաշատ քաղաք է, սակայն հայերն այստեղ մօտ 30 տուն են և ոչ աւելի, որոնց գլխաւոր պարապմունքը վաճառականութիւնն է. քիչ չէ և պետական հաստատութիւնների մէջ ծառայողների թիւը։ Տեղիս հայերն ունեն մի գեղեցիկ եկեղեցի, որ մի և նոյն ժամանակ ամբողջ գաւառի հայերի աղօթատեղին է։ Եկեղեցու բակումն է հայոց եկեղեցական-ծխական միդասեան երկսեռ ուսումնարանը, որի աշակերտների և աշակերտուհիների թիւը հազիւ 20-ի է հասնում։ Ուսումնարանն ունի մի կրօնուսույց քահանայ, մի վարժուհի և երկու ուսուցիչ։ Մասամբ իր սեփական միջոցներից, մասամբ էլ նուիրատուների նուէրներից գոյացած մի փոքրիկ գրադարան էլ ունի ուսումնարանը, որը պէտք է նկատել—այնքան էլ խնամքով չէ պահվում։

Քաղաքի մէջ հայ երիտասարդութիւն համարեա թէ չը կայ, բայց դրա փոխարէն կայ հայ օրիորդների մեծ չրջան։ Արմեանսկի հայ օրիորդները մեր չրջականերում և առհասարակ ամբողջ Տաւրիկեան նահանգում յայտնի են իբրև այնպիսի օրիորդներ, որոնք ունեն գիտակցութիւն, ինքնաճանաչութիւն և ոչ միայն հասկանում են մայրենի լեզուի, պատմութեան ու գրականութեան անհրաժեշտութիւնը, այլ և սկսել են գործել, աշխատել, որպէս թէ ձնչվելով առաջադիմութեան ազդեցութեան տակ. «Հայոնակն այ ինչ լեզու է, որ սովրենանք. կալաջի անենք» առողների թիւը օրէցօր պակասում է...։ Այդ մասին կանենք մեր դատողութիւնները «Մշակում» ժամանակի ընթացքում։

Քաղաքը վեց օր չարունակ մեռելութեան է մատնված, իսկ կիրակի օրերը միայն, երբ լինում է տաւտաւր, չուկայ, կամ ինչպէս տեղացիներն են ասում՝ բազար,—մի քիչ քաղաքը կենդանանում է, որովհետև համարեա բոլոր հացից ու մսից բոլոր մթերքները այդ օրն են ծախվում քաղաքում, որ բերում են շրջականներից ռուս գիւղացիները. իսկ տարվայ մէջ մի քանի անգամ տօնավաճառ է լինում, որոնցից մէկը այս սեպտեմբերին պիտի լինի։

Արմեանսկը աւելի չատ կարելի է մի գիւղաքաղաք կոչել. այստեղ մի կարգին—սալայատակած փողոց չէք տեսնի, բայց դրա փոխարէն կարելի է տեսնել չատ լայն ու նեղ «ճանապարհներ», որոնք ծածկված են փոչու կամ աւելի ճիշդ է ասել՝ հողի լայն չերտերով։ Քաղաքն ունի մի չորրորդական իգական պրոգիմնազիա, քաղաքային երեքդասեան ուսումնարան և մի քանի տարրական ուսումնարաններ։

Եթէ Արմեանսկն այսօր տնտեսապէս չատ ստոր է իր ազգակից քաղաքներից, եթէ հասարակական կեանքը իր երեսյթներով (եթէ միայն կարելի է ասել այդպէս Արմեանսկի վերաբերմամբ) չատ դանդաղ է առաջ գնում՝ պատճառը մասամբ հաղորդակցութեան ճանապարհներ չունենալու մէջ պէտք է որոնել։ Սեւաստոպոլ—Խարկովեան երկաթուղու գիծը մօտ 75 վերստ հեռու է անցնում Արմեանսկից, որով խիստ դժուարանում է տեղացիների համար ուրիչ քաղաքների հետ յարաբերութիւն ունենալը։ Գանգատվում են, որ ձմեռը, ցեխի պատճառով այնքան դժուարանում է երթևեկութիւնը Արմեանսկից Ջանքոյ կամ Թօզմանչ կայարանները, որ չատ անգամ այդ 75 վերստն անցնելու համար կառապանները մինչև 20, նոյն իսկ 30 րուբլի են վերցնում ճամբորդներից սովորական 3—5 րուբլու փոխարէն և 8—9 ժամվայ ճանապարհը հազիւ կարելի է լինում 15 ժամում անցնել։

Սակայն արմեանսկցիները կարող են այժմ ուրախ լինել, որովհետև ինչպէս տեղիս լրագիրները հաղորդեցին՝ Արմեանսկ երկաթուղի անցկացնելու վաղուց ծրագրված միտքը լուծում ստացաւ—չուտով կը սկսվեն աշխատանքները և այս խեղճ աւանը, որ դեռ վաղուց պիտի երկաթուղի տեսած լինէր՝ կը միանայ Խերսոն և Նիկոլաեւ քաղաքների հետ։

Խ. Տէր-Ենոքեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ախալքալաքում տեղեկութիւն է ստացված, թէ Տուրչից քաղաքը, որ գտնվում է 10 փարսախ հեռու Տուրքէզ-Խէյդարից, սեպտեմբերի 12-ի լուսաբացին տեղի ունեցած զօրեղ երկրաշարժից համարեա բոլորովին կործանվեց։ Կործանված է նաև ռուսական զինուորական պահականոցի չինութիւնը։

—

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը իր միջոցներից առեց 600 ր. ի նպաստ մալթարեան ուսումնասիրող կովկասեան Արշաւախմբի։

—

Լրագիրները հաղորդում են, որ մայրաքաղաքի այն չրջաններում, որոնք հետաքրքրվում են կանանց գիւղատնտեսական կրթութեան գործով, մեծ ապաւորութիւն գործեց Նարօզաւից ստացված այն լուրը, թէ այդ քաղաքում բացվում է կանանց գիւղատնտեսական բարձրագոյն խասիրսու։ Նոր հիմնվելիք հաստատութեան համար կարևոր ծախքը ամբողջովին իր վրա է վերցրել Նարօզաւեցի միլիոնատէր Գասպուսով, որ Ռուսաստանում երկաթագործութեան ընդարձակ գործարաններ ունի։ Հաստատութիւնը կը կրէ իր հիմնադրի անունը։ Գասպուսով արդէն տուել է այն ամբողջ գումարը, որ հարկաւոր է հաստատութեան չինութեան և պահպանութեան համար։

—

Նաւթագործարանատէրերը, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, միջնորդում են Նաւթագործարանատէրերի ներկայացուցիչների համաժողով գումարել Պետերբուրգում։ Համաժողովի գլխաւոր նպատակն է միացնել կէրօսինի արդիւնաբերութիւնը նրա արտահանութեանը հետ։ Մասնագրութիւն կայ համաժողովում քննութեան առնել մի չարք միջոցներ, որոնք կարող կը լինեն ընդարձակել Նաւթի գործածութիւնը որպէս հեղուկ վառելիք. ի միջի այլոց կը քննվի դէպի Մոսկվա և Պետերբուրգ Նաւթամուղ չինելու հարցը, բաժանող պահեստները։ Մի և նոյն ժամանակ կը քննվի հասարակական նաւթապահեստներ չինելու հարցը։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, Նաւթլուղի բնակիչների խնդրքով, որոշել է քաղաքային ջրմուղքի խողովակները հասցնել մինչև Նաւթլուղ և այդ բանի համար կարևոր 5,567 րուբլի ծախքը մտցնել 1905 թուականի նախահաշուի մէջ։

—

Շաբաթ, սեպտեմբերի 20-ին, տեղի ունեցաւ կենդանիների հովանաւորող Թիֆլիսի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, որ զբաղվեց ընկերութեան դրամական և այլ հարցերով։ Ի միջի այլոց ժողովը վճռեց դիմել Թիֆլիսի քաղաքային վարչութեան և խնդրել, որ նա պարտաւորեցնէ Թիֆլիսի ձիաքարչի անօնիմ ընկերութեան՝ աւելացնելու վագօնների թիւը և թոյլ չը տալու, որ իւրաքանչիւր վագօնի մէջ նստեն աւելի քան 23 հոգի։

—

Մայրաքաղաքի լրագիրների առելով, ներքին գործերի մինիստրութիւնը մշակել է մի ծրագիր, որով մասնագրութիւն ունի փոփոխութիւնների ենթարկել բժշկական խորհրդին վերաբերեալ կանոնադրութիւնը։ Ի միջի այլոց, խորհրդի մէջ, նոր ծրագրի համաձայն, պէտք է ներկայ լինի և մի ներկայացուցիչ ֆարմացեվտների կողմից և պէտք է քննվեն այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են դեղատներին և դեղավաճառութեան գործին։ Ֆարմացեվտների ներկայացուցիչը կընտրվի Պետերբուրգի ֆարմացեվտական ընկերութեան կողմից, որ նախօրօք համաձայնութիւնը կը կայացնէ այդ մասին պետութեան մէջ գոյութիւն ունեցող ուրիշ ընկերութիւնների հետ։

—

ուին ճանապարհ ընկանք։ Մի նեղ, փոքրիկ ձորով անցնելիս՝ ես նկատեցի, որ մեր խմբին միացել էր նաև երիտասարդ Բաքօն. նա հագածութեամբ սրում էր իր սեւթոյը, գեղեցիկ բեխերը և ուղղում գօտին ու նրանից կախված խանչալը։ Ես ամենևին ուշադրութիւն չը դարձրի այդ հանգամանքի վրա։ Մենք չուտով հասանք մի խումբ օթանների առաջին վրանին։

Ինձ ուրիշ տեղ էլ պատահել էր տեսնել քրդական օթաններ. նրանք իրանց կազմութեամբ ընդհանրապէս նման էին հայ գիւղացիների քինաներին. նոյն բոլորակ, ցածրիկ, թաղիքեայ վրանը, նոյն փոքրիկ, նեղլիկ բացուածքը դրան փոխարէն, որի միջով անցնելու համար մարդ պէտք է երկու տակ կռանայ, նոյն նեղուածքը վրանի մէջ, ուր երկու-երեք հոգի չեն կարող չարժվել միաժամանակ, վերջապէս նոյն կեղտն ու ծուխը, խեղդված, թթուաւերի ու մածնի հոտով լի օդը՝ չը նայելով դրսի մաքուր, անապական, լեռնային օդին։ Բոլորովին ուրիչ բան տեսայ ես քրդական օթաններում Մասիսի վրա։ Ընդարձակ, մաքուր, լուսաւոր տաղաւարներ՝ նրանք չատ աւելի դուրեկան տպաւորութիւն էին թողնում, քան ինչ որ ես տեսել էի մինչ այդ ժամանակ ուրիչ տեղերում։ Իւրաքանչիւրը նրանցից, յար և նման միւսներին, ունի հետևեալ կազմութիւնը։ Երկու Մասիսների բաց անջրպետի կողմից, որտեղից սովորաբար փչում է քամին, չինված է ցածր, մի արչին կամ մի քիչ աւելի բարձրութիւն ունեցող քարեայ պատ. նրա երկարութեամբ ձգված է նաչխուն գեղեցիկ կապերտ, որ բոլորովին՝ ուրիչ գործուածք ունի և նման չէ սովորական կապերտներին. մի-մի մատ իրարից հեռու՝ կապերտի մէջ անց են կացրած,—ի հարկէ, կապերտը գործելու ժամանակ,—եղէգնի բարակ ձողեր, որոնք տալիս են կապերտին սիրուն չերտաւոր տեսք և մի և նոյն ժամանակ որոշ աստիճանի կայունութիւն։ Պատի վրա կապերտը ամրացրած է փայտեայ նեցուկներով։ Նոյնպիսի կապերտներ, կրկին փայտեայ նեցուկների օգնութեամբ, կանգնեցրած են պատի երկու կողմերում, իրարից 15—20 արչին, երբեմն և աւելի հեռաւորութեամբ։ Իսկ այս երեք պատերի վրա, իբրև ծածկոյթ, քաչված է այծի մազից գործված մաքուր, սև, բծաւոր ծածկոյթ, մէջ տեղերում ամրացրած փայտէ երկար ձողերի վրա։ Առաջի կողմից տաղաւարը բոլորովին բաց է. այդտեղից նրա մէջ թափանցում է և մաքուր օդ և առատ լոյս։ Տաղաւարների միջի ընդարձակ տարածութիւնը,—ոչ բոլորի մէջ,—բաժանված է մի քանի մասերի՝ նոյն տեսակ կապերտների և նեցուկների օգնութեամբ։ Բաժանմունքներից իւրաքանչիւրը, երևում էր, ունի իր առանձին նշանակութիւնը. մէկում փաթած էին կապերտներ ու գորգեր,—անչուչտ դա կանանց բաժանմունքն էր և ննջարանը,—երկրորդում կային տնային գործածութեան զանազան առարկաներ—ամանեղէններ, ճախարակ և այլն, երրորդում չարված էին կաթի ամանները, չորրորդ փոքրիկ բաժանմունքը, որի պատերը քարից էին, նչանակված էր նորածին հորթերի համար։

Մենք ազատ մտնում էինք ամէն մի օթանոցում, հարցնում, հետաքրքրվում էինք ամէն մի մանրամասնութեամբ. և չէ կարելի ասել, որ մեր այս վարմունքը անհաճոյ լինէր օթաների տէրերին. ընդհակառակը նրանք ուրախութեամբ պատասխանում էին մեր հարցերին, պատասխանում էին, ի հարկէ, տղամարդիկ, ուր նրանք կային, իսկ ուր չը կային—հասակաւոր կանայք. քիւրդ գեղեցկուհիները լռում էին, բայց չէին փախչում մեզանից։

Ընկերներիցս երեք հոգի իրանց հետ վերցրել էին լուսանկարչական գործիքներ՝ զանազան տեսարաններ հանելու։ Մեր ուղեկից «բէկի» միջոցով մի օթայում նրանք առաջարկեցին քրդուհիներին նկարվել։ Լեռների ազատասէրները, առանց «հաղ ու տուզ» անելու, իսկոյն համաձայնվեցին, բայց նախ քան առաջ գալն ու չարվելը՝ նրանք մտան մի բաժանմունք։ Գատահմամբ ես նայեցի այդ բաժանմունքը,—քիւրդ գեղեցկուհիներից մէկը չտապ-չտապ փոխում էր չորերը. իսկ միւսը փոքրիկ հայելու առաջ կոկում և ուղղում էր երկար, սև մազերը. ես իսկոյն յետ փախայ և, կարծեմ, չը զգացի ոչ ոքի բարկութիւնը իմ տակտից անհամեստութեամբ... Այժմ, կինը պահում է գեղեցիկ երևալու ու դուր գալու իր անյաղթ սէրը նոյն իսկ Մասիսի վայրենի լանջերի վրա։

Քրդուհիները մի քանի րոպէից յետոյ դուրս եկան ննջարան-բաժանմունքից և չարվեցին տաղաւարի առաջ։ Այս հանգամանքը հնարաւորութիւն տուեց մեզ լաւ դիտելու նրանց։ Բայց ես դիտում էի ոչ նրանց չորերը, որոնք առանձին հետաքրքրութիւն չէին ներկայացնում, որովհետև երիտասարդ քրդուհիները հագել էին եւրոպական անխուսափելի, թէև քրդական ճաչակի վերածած՝ չրջազգեստը, որ խցկվել է նաև քրդական օթաններում, այլ ես դիտում էի իրանց՝ քրդուհիներին։ Սակայն ոչ բոլորին... Մի 15—16 տարեկան գեղեցկուհի առանձնապէս գրաւել էր իմ ուշադրութիւնը։ Բարձրահասակ, կարմրաթչիկ, երկար կամար յօնքերով, աչքերի սև, երկայն արտեւանունքներով, դէմքի զարմանալի դուրեկան գծագրութեամբ՝ գեղեցկուհի Այշան,—նրա անունն ես իմացայ տիկին Էքիզ-Կրիմի հարցին տուած պատասխանից,—կանգնած էր չարքի մէջ տեղում և համեստութեամբ վայր էր նայում։ Նա իր գլխին դրել էր թիւրքական ֆէս, որի առաջից, [illegible] ճակատի վրա, կախված էր մի ոսկեայ չարան։ Սեւաթոյր երկայն մազերը դուրս էին թափվել ֆէսի տակից ու փռվել թիկունքի վրա բազմաթիւ բարակ ու երկայն հիւսերի ձևով։ Շրջազգեստի վրայից նա հագել էր կապոյտ մահուդի կարճ բաճկոնակ՝ ոսկեթել բանուածքով եզերքներին, որպիսին, յիչում եմ, հագնում էին կանայք Ալէքսանդրապոլում 20—25 տարի առաջ։ Ես իզուր սպասում էի, որ քիւրդ գեղեցկուհին գոնէ մի րոպէ բարձրացնէ հայեացքը գետնից, որ ես տեսնեմ նրա աչքերը, նրանց արտայայտութիւնը. Այշան չը կատարեց իմ գաղտնի ցանկութիւնը. անյաղթելի յամառութեամբ նա չարունակում էր վայր նայել։

Քիւրդ բէկը, որ «մտերմացել էր» ինձ հետ իր հայրենասիրական զեղումների ժամանակ, կամաց խփեց իմ թևին։ Ես չուռ եկայ։

—Նայիր Բաքօյին, կամաց չչնջաց բէկը ականջիս, ինքն իրան ուտում է խեղճը։

Ես նայեցի Բաքօյի կողմը. երիտասարդի դէմքի վրա նկատելի էր ներքին անհանգստութիւն. անգիտակցաբար նա մէկ սրում էր բեխերը, մէկ ուղղում չորերը, մէկ թաց տալիս լայն, կորովի թիկունքը և անթարթ յառած աչքերով կլանում էր Այշային։

—Սիրահարված է։

Բէկը գլխով արեց։

—Եւ նոր չէ սիրահարված. մի ամբողջ տարի է, բայց Այշայի հայրը չէ տալիս։ Բաքօն մի քիչ լաւ անուն չունի։

—Բաս ինչ պիտի լինի, հարցրի ես միամտաբար։

—Ինչ պիտի լինի,—ծիծաղեց բէկը,—կը փախցնէ ու ամէն ինչ կը վերջանայ. տեսում ես աղջիկն էլ է սիրում Բաքօյին. սա խեղճը չէ կարողանում աչքերը բարձրացնել գետնից։

Քրդուհիների մի քանի խմբեր ես նկարելուց յետոյ, որոնց մէջ ես, դժբաղդաբար, այլ ես չը տեսայ Այշայի նման գեղեցկուհի, մենք չտապեցինք վերադառնալ մեր վրանը։ Ճանապարհից ես նկատեցի, որ Բաքօն մեզ հետ չէ. յետ նայեցի և տեսայ, որ նա մի ուրիշ քրդի հետ թափառում էր Այշայի վրանի չուրջը...

Արարատի գագաթից վերադառնալուց յետոյ արդէն, ճանապարհին, իմ ականջիս դիպաւ, որ գեղեցկուհի Այշան այլ ևս Սարդար-Բուլախի օթաններում չէ. Բաքօյի հետ միասին նա փախել էր Բայազէդի կողմերը... Ես այդ ժամանակ փոքր ինչ տկար էի և զբաղված անձնական առողջութեան ծանծրալի հոգսերով՝ չը կարողացայ իմանալ համեստափայլ քրդուհու փախուստի մանրամասնութիւնները...

(Կը չարունակվի)

Ամսիս 21-ին Թիֆլիսի քաղաքային ապաստարանների մասնաժողովը իր ամբողջ կազմով և մասնակցութեամբ երկաթուղու գլխաւոր մեխանիկի Նոյեց այրի տիկին Աննա Աւետիսեանցի խցանի գործարանը, որը վերջինս կամենում է նուիրել քաղաքին։ Մեքենաները միանգամայն պարզ են։ Նրանց վրա կարող են աշխատել նոյն իսկ 12—15 տարեկան պատանիներ։ Մասնաժողովը վերջնական եզրակացութեան չեկաւ՝ ընդունել կամ չընդունելու մասին, որովհետև նախ պէտք է ծանօթանալ այդ գործի շահաւէտութեան հետ, ուստի որոշվեց առաջ այդ հարցը պարզել և ապա պատասխանել տիկնոջ։

—

Քաղաքային արհեստաւորների վարչութիւնից ընտրված մասնաժողովը, նախագահութեամբ արհեստաւորների աւագի, քննելով ափսեկան չինութեան յատակագիծը, գտաւ, որ այդ յատակագծով կառուցած չինութիւնը կարժած նախահաշուից աւել կը նստի, մինչդեռ իրանք աւելորդ գումար չունեն։ Որպէս զի չինութեան հարցը գլուխ գայ, վճռեցին այնպիսի չինութիւն կառուցանել, որը մի և նոյն ժամանակ շահաւէտ լինի և որի միջոցով կարելի լինի և պարտքերը հանգցնել, ուստի յարմար գտնեցին չինութեան ներքի յարկում կառուցանել 5 խանութ։

—

Կիրակի, սեպտեմբերի 21-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում ներկայացվեց «Ռոմէօ և Ջուլիետա» օպերան, որի մէջ Ռոմէօի դերը կատարում էր Ֆիգները։ Նշանաւոր տենորը իր երգեցողութեամբ մեծ բաւականութիւն պատճառեց հասարակութեան։ Այն մաքուր, խմաստալից, ճաշակով երգը, որ տալիս է Ֆիգները, դարձնում է նրան առաջնակարգ կատարող։ Եղանակը և խմառը Ֆիգների երգի մէջ, միաւորված են մեծ հմտութեամբ։ Ջուլիետայի դերը կատարող Արցըբաշևսա տրել է առաջադիմութիւն, բայց դեռ կարօտ է կատարելագործութիւնների։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի այգեգործական դպրոցի մասնագիտական առարկաների և այգեգործական պրակտիկայի ուսուցչի պաշտօնի համար հրաւիրել է պ. Մուշաիձէին, որը աւարտել է Օդեսայի համալսարանի բնագիտական ֆակուլտէտը։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

Ի՞նչ են պատմում պատգամաւորները.—Մօտ օրերս Պետերբուրգ են հասել մակեդոնացի գաղթականների կողմից ուղարկված մի պատգամաւորութիւն՝ Սօֆիայի համալսարանի երկու պրոֆեսորներ՝ Լիւբոմիր Միլետիչ և Իւան Գէօրգիև, որոնց նպատակն է հանգամանակութիւն տանել և առհասարակ մի կազմակերպված օգնութիւն առաջացնել իրանց թշուառ հայրենակիցների համար։ Թէ ռուս հասարակութիւնն ինչ չափով կարտայայտէ իր մարդասիրութիւնը, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան, իսկ առ այժմ հետաքրքիր է այդ պատգամաւորների հաղորդած թարմ տեղեկութիւնները ապստամբական շարժման մասին։

—Ճի՞շդ է արդեօք, հարցնում է թղթակիցը, որ ապստամբութիւնը ամենալաւ պայմանների մէջ է։

—Այո, պատասխանում են պատգամաւորները։ Մեր դուրս գալուց առաջ մենք տեղեկութիւններ ստացանք ապստամբների կենտրոնական վարչութիւնից, որ բոլոր հրոսակախմբերը հիանալի դրութեան մէջ են և ապստամբութիւնը աւելի ու աւելի մեծ չափեր է ընդունում։

—Բայց չէ՞ որ թիւրքերը շարունակ կոտորում են նրանց, շարունակ յաղթութիւններ են տանում։—Թիւրքական յաղթութիւնները միայն թղթի վրա գոյութիւն ունեն, բայց ոչ իրականութեան մէջ։ Նրանք կարողանում են կոտորել ոչ թէ հրոսակներին, այլ ձեռքերին ընկած անզէն-անպաշտպան կանանց, երեխաներին ու ծերերին։ Ճիշդ է, ապստամբները կորցրել են մի քանի առաջնորդների, բայց դրա պատճառն այն է, որ վերջինները երբեք ղեկավարներ միշտ առաջի շարքերում, միշտ վտանգաւոր տեղերում են եղել։ Ընդհանրապէս կորուստները մեծ չեն, որովհետև ապստամբները խույս են տալիս մեծ ընդհարումներից, իսկ թիւրք զօրքն էլ շատ անգամ վախենում է հրոսակախմբերի հետ պատահելու։ Առհասարակ ապստամբները մարդկանց պակասութիւն չեն զգում, ուստի այնքան էլ ցանկալի չեն համարում կամաւորների հոսանքը Բուլգարիայից։

—Այժմ որքան է ապստամբների թիւը։

—Բիտոլիայի վիլայէթում—մօտ 10,000, Սալոնիկի վիլայէթի Սէրէս սանջակում—7,000 և Ադրիանապոլի վիլայէթում—3,000 ուրեմն ընդամէնը մօտաւորապէս 20,000։

—Իսկ ճի՞շտ է արդեօք, որ հազարաւոր կամաւորներ են անցնում բուլղարական սահմանից։

—Երբէք. Թիւրքերն առհասարակ չափազանցնում ու յեղաշրջում են իրողութիւնը։ Այդքան ապստամբներից հազիւ 1000-ը հազիվ լինեն Բուլգարիայից եկածները։ Բոլոր մնացածները տեղացիներ են, որոնց առանց յուսահատվելու տանում են ապստամբութեան արիւնոտ խաչը…

—

Կեանքի պահանջը։ Թիւրք կառավարութիւնը իր անզօրութեան ամօթանքը ծածկելու համար շարունակ լուրեր է տարածում, թէ մակեդոնացիներն արդէն ընկճված են, թէ ապստամբութեան գլխաւոր վայրերը խաղաղված են։ Սակայն այդ բոլորը դատարկ ինքնախաբէութեան արդիւնք է, մնացած առանց էլ ճիշդ այնպէս, ինչպէս և թիւրքական բոլոր խոստումներն ու բարենորոգումները։ Դառն իրողութիւնը ցոյց է տալիս, որ թափված արիւնը, կատարված սարսափները բոլորովին հակառակ հետևանք են ունենում։ Մակեդոնացի գեղջուկը, կորցնելով ամեն ինչ, զոհ տալով իր հարազատներին, մոռանում է խաղաղ կեանքը և կատաղի աչքով դարձած ընկնում է սար ու ձոր։

—Վրէժ, վրէժ, մռնչում են այդ տեւուն ապստամբները, օրէցօր ստուարացնելով հրոսակախմբերի շարքերը և աւելի ու աւելի խորացնելով այն անլուծանելի հանգոյցը, որի անունն է «մակեդոնական հարցը»։

Եթէ աչքի առաջ քաշելու լինենք մօտիկ անցեալը, այն ժամանակ կը տեսնենք, որ «մեծ պետութիւնների քաղաքականութիւն» կոչվող ոյժը մի շարք քօղարկութիւններ է կատարել մանրիկ ազգերի վերաբերմամբ, քօղարկութիւններ, որոնց յամենայն դէպս պատասխանատու յիշատակներ թողնելու չեն պատմութեան էջերում։—«Փոքրիկ ես, անզօր ես, ուրեմն լուռ ու մունջ ստրկացիր, տառապիր և նոյն իսկ արեան մէջ խեղդվիր. քեզ օգնող չի լինի»—ահա այդ է տալիս «մեծերի» քաղաքականութիւնը։

Այդ քաղաքականութիւնն էր, որ յաղթական տարաւ չարաբաստիկ հայկական խնդրի վերաբերմամբ։ Դա էր, որ քարացած անտարբերութեամբ երեք տարի շարունակ դիտեց Հարաւային-Աֆրիկայի բուրերի անհաւասար կռիւը անգլիական աշխարհակալութեան դէմ։ Վերջապէս դա է, որ այժմ էլ դատապարտել է աշխատում իրանց կեանքը, գոյքն ու պատիւը պաշտպանող մակեդոնացիներին և ապստամբութիւնը ճնշելու ազատութիւն է տալիս այնքան արիւնհեղութեան հեղինակ սուլթան Համիդին։

Ուշի ուշով հետևեցէք վերջին օրերս ստացվող հեռագրական տեղեկութիւններին և այն ժամանակ դուք կը համոզվէք, որ քաղաքականութիւնը աւելի ու աւելի չեչոտակի կերպով կրկնում է մակեդոնացիներին.

—Բաւական է. նորից խոնարհվեցէք թիւրքական լծի տակ և պրծէք արիւն ու մոխիր դարձած ձեր հայրենիքում։

Այդ է եւրոպական քաղաքականութեան վերջին պատգամը։ Սակայն ազգերի կեանքն էլ իր որոշ օրէնքներն ունի, իրականութիւնն էլ իր պահանջներն է առաջ մղում, առանց ուշք դարձնելու արտաքին հանգամանքներին ու բարոյախօսութիւններին։ Այդպիսի հասունացած պահանջներն էին, որ հիմք տուին մակեդոնական ապստամբութեանը և այժմ էլ անշեղ կերպով շարունակում են նրա ընթացքը։ Քաղաքականութիւնը կարող է բացասել այդ պահանջները, կարող է իր անտարբերութեամբ աւելացնել զոհերի թիւը, բայց կանգնեցնել կեանքի պատմական զարգացումը, փոխել նրա «երկաթէ օրէնքները» անկարող է։ Տարիների, տասնեակ տարիների փորձը ցոյց է տալիս, որ Թիւրքիան իր այժմեան ընթերքով անընդունակ է բարենորոգութեան, որ թիւրքահպատակ քրիստոնեայ ազգերը այլ ևս անկարող են տանել անվերջ բռնութիւնները, որ անհրաժեշտ է ազատել նրանց դարաւոր լծից։

Այդ անհրաժեշտութեան արդիւնքներից մէկն է մակեդոնական այժմեան ապստամբութիւնը։ Եւրոպան ու Թիւրքիան կարող են այժմ զօրութեամբ այս աշուն, այս ձմեռ խեղդել ապստամբութիւնը, բայց նա հաւանականօրէն նորից բռնկվելու է հետևեալ գարունն. կարող են նորից ճնշել, բայց նա ասպարէզ կը գայ միւս տարի, մի քանի տարի յետոյ—մինչև որ կեանքի պահանջը իր յաղթողն ստանայ և իրականութիւնը յաղթանակէ։ Չը պէտք է մոռանալ, որ կենսական հասունացած պահանջը մի հեղեղ է, որի հոսանքը միշտ խորտակում է ամեն մի պատնէշ. լինի դա քաղաքականութիւն կամ մի այլ ոյժ—այդ մի և նոյն է։

## ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բեռլին, սեպտեմբերի 22-ին

Պարլամենտական ընտրութիւնների ուժգին կռիւներից և հետևողական յաղթանակներից յետոյ, Գերմանիայի ամենամեծ՝ երեք միլլիոն ընտրողների, կուսակցութիւնը—սօցիալ-դեմօկրատական իր տարեկան ընդհանուր համագումարը ունեցաւ Դրեզդէնում, ամսիս 13—21։ Պատգամաւորներ և չորրորդական հեռագիրներ եկել էին Եւրոպայի բոլոր ծայրերից և Ամերիկայից։

Սովորական երևոյթ է իւրաքանչիւր կուսակցութեան համար, նախ քան պարլամենտական նիստերի սկզբնաւորելը, կուսակցական ժողով գումարել կենտրոնական ֆրակցիայից—այսինքն կուսակցութեան պաշտօնական—պարլամենտական ներկայացուցիչներից և բոլոր ցիրուցան տեղական մարմինների պատգամաւորներից։ Կուսակցութեան վարչութիւնը հաշիւ է ներկայացնում իրան յանձնված պաշտօնական գործերի մասին։ Գետութեան բոլոր ծայրերի մարմիններից տեղում են զանազան առաջարկութիւններ այս կամ այն խնդրի վերաբերեալ, անցեալի և ներկայի փորձառութիւնից ծրագրվում են որոշումներ կուսակցութեան ապագայ տակտիկայի մասին և այլն։ Պաշտօնական ֆրակցիան՝ մի բուռն ժողովրդի հաւատարմատար ներկայացուցիչները, պարտաւոր են իրանց գործնական դիրքով, իրանց կուսակցական աշխարհայեցողութեամբ միանգամայն համապատասխան լինել ընդհանրութեան այն սկզբունքներին, որոնց կուսակցութեան գոյութիւնը պայմանաւորող յատկանիշներն են կազմում։ Այս և այսօրինակ կէտերի մասին հասարակական խորհրդածութիւնը կազմում է իւրաքանչիւր կուսակցութեան տարեկան ընդհանուր համագումարի նպատակը։

Անտարակոյս, բոլորովին այլ ազդեցութիւն, անհամեմատ է առաջ բերում Գերմանիայում սոցիալիստականների որ և է հաւաքական քայլը, քան որ և է տափակ ու միջակութիւն դարձած կուսակցութեանը։ Ինչու։ Որովհետև անհնարելի է յարված կերպով ուշադրութիւն չը դարձնել և հաշւեկշռի չենթարկել այն բոլոր շարժումներն ու կուսակցական որոշումները, որոնք օրէցօր՝ մէկը քան միւսը զօրեղ թափով առաջանում են մեր քաղաքական և հասարակական կեանքում սոցիալիստականների կողմից։ Գերմանիայի սօցիալ-դեմօկրատական հազարների, տասն հազարների կուսակցութիւն չէ, որի սատն ու արածը անհետ ու աննկատելի անցնէ գնայ։ Նա մի կուսակցութիւն է, որի կողմն է հակված գերմանական ամբողջ ընտրող ժողովրդի 1/3 մասը, հետևապէս մեր ժողովրդական ներկայացուցչութեան վերապահված խնդիրների լուծման 1/3 մասը առաջ է ընթանում սօցիալ-դեմօկրատիական աշխարհայեցողութեամբ ու մտածողով…»։ Այսպէս է խոստովանում քաղաքացիական մամուլի ազդեցիկ և, չը պէտք է ուրանալ, տախտակ լուր՝ լրջամիտ մասը։ Լրջամիտ գոնէ մինչ այն աստիճան, որը հակառակ պահպանողական կամ կղերական ծայրահեղ կուսակցութեան, քաջութիւն ունի ակնյայտնի իրողութիւնը հրապարակ գոյներով երևան հանելու։ Եւ սա շատ բնական է։ Ի՞նչպէս լռէ, աչքաթող անէ արդարադատ կարգերի երկրպագուն, երբ նկատում է, թէ ինչպէս անզգալի արագութեամբ ստուարանում է սոցիալիստականների պարագլուխ բանակը, շարունակ իր կողմը գրաւելով սկզբունքական կրթութիւն ստացած թարմ ոյժեր։ Մինչ, ծաղկում է սոցիալիստականների մամուլը, բազմանում ընթերցող հասարակութիւնը, երևան են գալիս փայլուն գլուխներ՝ տնտեսագիտութեան, սօցիալօլօգիայի, սօցիալիզմի, սօցիալ-քաղաքական և այլ գիտութիւնների ասպարեզներում։ Հարկ էր արդեօք 60-ական թւականների՝ Լասալի ժամանակակից երիտասարդութիւնը, որ այժմ հին ու ծեր սերունդ է կազմում, երբ և իցէ երևակայել, որ քրիստոնէական պատերազմի մի անխնայ խումբը պիտի բռնկվէր, ծաւալվէր Գերմանիայի բոլոր ծայրերը և 40 տարվայ ընթացքում ողջ գերման ազգի առաջին մեծաքանակ կուսակցութիւնը կազմէր։

Ճշմարիտ, տարօրինակ երևոյթ է նկատել, թէ ինչպէս վերջին ամիսներից սկսած՝ ընտրութիւններից յետոյ, սոցիալիստականների իւրաքանչիւր քայլը, տեսական և գործնական հայեցակէտը՝ կուսակցական, թէ այլ խնդիրների վերաբերեալ, անգամն ամէնափոքր է առաջ բերում հասարակական կեանքում. Չը տեսնված ուրախութիւն է տիրում քաղաքական շրջաններում, երբ սոցիալիստականներից որ և է պարագլխի անհակս քայլը տեղիք է տալիս գժտութեան՝ կուսակցութեան ներքին կեանքում. Իսկ այժմ սրտաթափ պահերով սպասում էր յետադէմ մասը, արդեօք, սոցիալիստականները այս տարվայ համագումարում որ և է անհրաժեշտ փորձ պայթում չի տայ. Արդեօք, մարքսիստները ու նէօ-մարքսիստները կամ օրթոդոքսները ու ռեվիզիոնիստները վերջին թափով չեն ընդհարվի միմեանց հետ և միմեանցից բաժանվելով տարբեր խմբեր կազմէ։ Այս ընդհանուր տրամադրութիւնն էր տիրում ազգային-բուրժուազիական խաւերում, նախ քան սոցիալիստականների համագումարը և այդ բոլորին տեղ տալ թողը եղել է մի գրական բանակռիւ պարագլուխների մէջ, որի հետ ստորև կը ծանօթանանք։

Կարիք չը կայ, անշուշտ, ամբողջ 9 օր տևող համագումարի մանրամասնութիւնների մէջ ընկնել, որոնք արդէն էլ հետաքրքրական լինեն, այնու ամենայնիւ մասամբ տեղական բանաւորութիւն ունեն և մասամբ էլ անկախ պատճառներից դրդված՝ անկարող ենք մէջ բերել։

(Կը շարունակվի)

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Frankfurter Zeitung» լրագրին հաղորդում են, որ Ադրիանօպօլի վիլայէթի շատ տեղերում քրիստոնեայ ժանդարմները ապստամբներին են յարել։

—Նոյն լրագրին հեռագրում են Կ. Պօլսից, թէ հիւպատոսական զեկուցումները հաստատում են, որ Ադրիանօպօլի ամբողջ վիլայէթում այժմ տիրում է սով, իսկ սովի սովորական ուղեկից տիֆը տանում է բազմաթիւ զոհեր ազգաբնակութիւնից։ Ամբողջ շրջաններ աւերված են. օդը լիքն է լուծվող դիակների գարշահոտութեամբ։ Բուրգաս քաղաքը և շրջակայ գիւղերը լիքն են կանանցով և երեխաներով, որոնք մեռնում են քաղցից։ «Times» լրագրի ասելով, Լօնդօնից մօտ օրերումս կուղարկվի Ադրիանօպոլ մի մասնաժողով՝ օգնութիւն ցոյց տալու ապստամբութեան զոհերին։

—«Daily Mail» անգլիական լրագիրը ստացել է միաժամանակ Պարիզից և Բերլինից հեռագիրներ հետևեալ բովանդակութեամբ. «Պետութիւնների մէջ համաձայնութիւն է կայացել ֆրանսիական գերիշխանութեան վերաբերմամբ Մարօկկոյի վրա։ Ֆրանսիան ստանում է գործունէութեան ազատութիւն յիշված երկրի մէջ։ Այս բանի փոխարէն Իտալիան ստանում է Տրիպոլիսը. Անգլիայի գերիշխանութիւնը Եգիպտոսի վրա ընդունվում է բոլոր պետութիւնների կողմից և նրա ազդեցութեան շրջանը ընդլայնվում է։ Սպանիան ստանում է Ֆրանսիայից մի քանի մանր զիջողութիւններ. Գերմանիային խոստումն է տրվում, որ նա ազատ առևտրի իրաւունք և մի քանի արտօնութիւններ կը ստանայ Մարօկկոյում. Ցայտնի չէ միայն, թէ երբ կը յայտարարվի ֆրանսիական գերիշխանութիւնը պաշտօնական կերպով. դա կարող է պատահել իւրաքանչիւր րոպէ։ Յամենայն դէպս Ֆրանսիան պատրաստ է»։

—Ռուանի միջազգային կոնգրէսը փակվելուց առաջ, ընդունեց հետևեալ որոշումը Էլզաս-Լօտարինգիական հարցի վերաբերմամբ. «Ի նկատի ունենալով, որ մերձեցումը Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ շատ ցանկալի է, լինելով մէկը հաստատուն խաղաղութեան անհրաժեշտ պայմաններից, ի նկատի ունենալով, որ համաշխարհային հարցերի լուծման կարեւորութիւնը անխուսափելի է դարձնում այդ մերձեցումը, ուստի խաղաղութեան XII-րդ միջազգային կոնգրէսը յանձնում է հետևեալ կոնգրէսին, որ պէտք է տեղի ունենայ ոչ Գերմանիայում և ոչ Ֆրանսիայում, միջոցներ գտնել հասնելու այդ ցանկալի մերձեցման։»

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 սեպտեմբերի

ՄԻՏԱՎԱ. Ուղղափառներին այլադաւան ազդեցութիւններից պաշտպանելու համար հիմնված է մի կրօնական-զարգացուցիչ ընկերութիւն, որը պէտք է փիլիսոփայական-աստուածաբանական ընթերցանութիւններ ու զրոյցներ կազմակերպէ։

ԼՕՆԴՕՆ. Միւս պետութիւնների համաձայ-

նութեամբ Մարոկկոի կրիզիսի լուծումը թողնված է Ֆրանսիային, որը ապահովեցնում է status quo-ն։ Խոսք անգամ չը կայ Ֆրանսիական հովանաւորութեան մասին։ Գիբրալտարի նեղուցի և Մարոկկոի ափերին ընկած քաղաքների վերաբերմամբ պետութիւնների մէջ բանակցութիւններ են տեղի ունենում։

ՊԱՐԻԶ։ Զօլայի մահվան տարեդարձի առիթով նրա գերեզմանին այցելութեան գնացին մի քանի հազար մարդիկ։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Սեպտեմբերի 17-ին Զիմա կայարանի մօտ երկաթուղային գնացքը դուրս եկաւ բեռներից։ Սպանված են մեքենավարը, հնոցագործը և գոտեպահպանը, թեթև վէրքեր են ստացել 3 ճանապարհորդ և 3 ծառայողներ։ Ճանապարհը ուղղված է։

ՎԱՇԻՆԳՏՈՆ։ Չինաստանի հետ առևտրական դաշնագիր կայացնելու մասին բանակցութիւնները վերջացած են։ Չինաստանը համաձայնել է բաց անել մանջուրական երկու նաւահանգիստներ։ Դաշնագիրը ստորագրելու են սեպտեմբերի 25-ին։

ՍՕՖԻԱ։ Դէմիրլօքի մօտ պատահած ընդհարման մասին այստեղ ոչինչ յայտնի չէ։

23 սեպտեմբերի

ՎԻԵՆՆԱ։ Կայսրը ընդունեց Հեդերվարիին։ Նրանը ներկայացրեց մանրամասն զեկուցում հրաժարվելու պատճառների և իրերի դրութեան մասին։ Կայսրն իրան վերապահեց ապագայ որոշումը։

Կ. ՊՕԼԻՍ։ Բազմաթիւ բուլգարական հրոսակախմբեր բուլգարական օֆիցէրների առաջնորդութեամբ անցան սահմանը և մտան Բազլոդի կազան։ Նրանք յայտնվեցին Պեարիչ, Մելնիկ, Դրամ, Նեմրօկոպ և Զումբալի քաղաքներում և յայտարարեցին ընդհանուր ապստամբութիւն։ Ելդրդ-Կիօռկի մի բարձրաստիճան պաշտօնեայ, որ շատ մօտ է սուլթանին, գազանի խօսակցութեան ժամանակ յայտնեց այն միտքը, թէ սուլթանը այլ ևս բոլորովին բացասաբար չի վերաբերվում դէպի բուլգարական պահանջը՝ Մակեդոնիայում քրիստոնեայ նահանգապետ նշանակելու մասին։

ԴԱՐՄՇՏԱԴ։ Ժամանեց անգլիական թագուհին Վիկտորիա պրինցէսուհու հետ։

ՍՕՖԻԱ։ Զինուորական մինիստրութիւնը հրատարակեց իշխանական հրամանը այս տարի 24,000 նորընտիր զինուորներ հրաւիրելու մասին։

ՐԻԼՕ։ Այստեղ հասան 2000 նոր փախստականներ։

ԼՕՆԴՕՆ։ Ֆրանսիայի և Անգլիայի բանակցութիւնները Մարոկկոյի հարցի վերաբերմամբ կը շարունակվեն միայն կաբինէտի պահանջով։ Համաձայնութեան մասին տարածված լուրերը անհիմն են։

ՊԱՐԻԶ։ Եպիսկոպոսական նաւատորմը գտնվում է Կորէայի ափերի մօտ, Ֆուզանա բարձրութեան վրա։ Նաւերի վրա դրված են մի քանի շարք զանազան զէնքեր։

ԼՕՆԴՕՆ։ Զեմբերլէնը նշանակված է Ֆինանսների մինիստր, Լիտլդոնը՝ գաղութային գործերի քարտուղար, Ֆոբսերը՝ զինուորական մինիստր, Բրոդրիկը՝ Հնդկաստանի քարտուղար, Մուրրէ՝ Շոտլանդիայի քարտուղար և Սանդլին՝ պօստի դիրեկտոր։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ։ Ռուսաց նաւախումբը, որ զօրախաղ էր կատարում Կվանչունայի մօտ, ժամանեց այստեղ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԹԱԼԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՑԱՑՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ

**Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ**

Ընդունում է մանուշակագոյն սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։

Բիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ։

Ամենայն օր Առաւօտ. 12—2 ժ.

Երեկոները 5—6 ժ.

Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի. № 20. Բախչիեվի դեղատան կից. Большая Ванкская ул. домъ Кузанова, № 20, рядомъ съ аптекой Бахчіева. 9—100

Նախկին ՅՈՎՆԱՆԵԱՆ ԲԱՐՎԱՆՍԱՐԱՑՈՒՅ Սիօնի փողոցում տրվում է վարձով դատարկ հատատեղ։ Վարձու գները կարելի է իմանալ կառավարիչ Գուլուլեանից։ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
ՌՈՒՍԱՑ ՕՊԵՐԱ
Չորեքշաբթի, սեպտեմբերի 24-ին
կը ներկայացվի
**ՏՐԱՎԻԱՏԱ**
Օպերա 4 գործ. երաժշտութ. Վերդիի
Մասնակցում են.—Տ.տ. Զիժօվա, Կարտավինա, Սկօրուպսկայա։ Գ.գ. Ֆիգներ, Իլիչչենկօ, Եվլախով, Շմակով, Գրինեվ, Դավրիլով, Պերիլա։
Սկիզբը երեկոյեան 8 ժամին,
Ազդ. վաղը, հինգշաբթի, սեպտեմբերի 25-ին, կը ներկայացվի «Մուսալկա»։ Ուրբաթ, սեպտեմբերի 26-ին—«Ֆաուստ»։
1—1

ԹԻՖԼԻՍԻ ԱՑԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ նորեկ աշակերտների քննութիւնը կը լինի Հոկտեմբերի 7-ին։
(չ. ո. կ.) 1—3

ԼՈՒՍ ՏԵՍԱԻ
**Պատկերազարդ Դասագիրք**
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
Ա. տարի
Հ. Յովհաննիսեանի
Դիմել՝ Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներին։
1—3

ՆԿԱՐԻՉ ԳԻՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ
**ՆԿԱՐՉԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ**
ԳԻՐՔԸ
6 տպագրական թերթից բաղկացած, չքեղ վերջէ թղթի վրա տպած, ընտիր արտասահմանեան թղթով չտպված, լայս տեսաւ և ծախվում է Պետերբուրգում։
Գինն է 35 կ. ճանապարհածախսով
Դիմել հետևեալ հասցէով. С. Петербоургъ, „Пушкинская скоропечатня“, Христафору Башинджагянъ, Лештуковъ пер., д. № 4.
5—10

ԲԺՇԿԱՊԵՏ
**ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ**
Վերադարձել է հանքային ջրերից և վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։ Գանձասարյան փող, № 20, տ. Թամամշևի (Гановск. ул., д. Тамамшева, № 26).
Առաւօտեան 9—10½ ժամը
Երեկոյեան 5— 7 ժ.

**Կ. ԿԷՕՆՃԵԱՆ**
Շարունակում է հիւանդների ընդունելութիւնը։ Բժշկում և լքցնում է հիւանդ ատամներ, շինում է՝ անդամահատված ծնօտների պրոթեզներ (резекціонные протезы), արուեստական ատամներ, քիթ և քիմք։
Ընդունում է առաւօտեան 9—2 ժ.
Երեկոյեան 5—8 ժ.
Հասցէն՝ Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի, Эриванская пл. д. № 2, надъ аптек. магаз. Кавк. Тов.
(չ. ո. կ.) 9—20

ՅՈՎՀ. ԱՐԱԲԱՋԵԱՆ
**ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ**
Առաջին տարի . . 25 կ.
Երկրորդ տարի . . 30 կ.
Երրորդ տարի . . 40 կ.
Դիմել՝ Александрополь. Учителю Ованнесу Арабаджіанцъ. 4—5

**Ֆրանսերէն դասեր**
Տալիս է մի հայ տիկին, վերջացրած Ժընէվի համալսարանը։
Դիմել՝ Вельяминовская ул. № 19.
8—15

**Հարկաւոր է**
Լոռի գիւղի ս. Աստուածածին եկեղեցու համար
**ՄԷԿ ՈՒՍՈՒՑԻՉ**
Ներսիսեան դպրոցաւարտ, նաև գիտակ եկեղեցական արարողութեան՝ ազոռակ ձայնով։ Պայմանների մասին դիմել՝ Сочи (Чер. Губ.) Господину управляющему имѣніемъ Варданэ: съ передачею Лоо, Алексану Трабезоньянцу. 4—4

**ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ!!!**
**Վ. ԵՒ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՐՁՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ**
որ գտնվում է Գօլովինսկի Պրոսպէկտի վրա I դիմեազիայի հանդէպ
Ստացված է ՄԵԾ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ներկայ և եկող սեզոնների համար կանանց, տղամարդկանց և երեխայոց պատրաստի հագուստներ, կարված պարիզեան և բերլինեան ամենավերջին ոճերով։
Ունենք նաև քաղաքացիական բոլոր հաստատութիւնների և միջնակարգ դպրոցների հագուստներ։
Ընդունում ենք մեր սեպհական կտորներից—տղամարդկանց հագուստների ամենայն տեսակ պատուէրներ—որոնք ստացված են ռուսական և արտասահմանեան ամենայայտնի գործարաններից։ Արժանութեան կողմից՝ չունի ոչ մի մրցող։ 1—10

**Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում**
վաճառվում են հայերէն հետևեալ նոր գրքերը՝
ԱԴՈՆՑ Ն., Բանբեր գրականութեան և արուեստի, պատկերազարդ, մեծադիր 256 երես, ընտիր թղթի վրա, ա. գիրք, Պետերբուրգ, 1903 թ. գ. 2 ր. 50 կ. Բաժանորդագին է 2 հատ. 4 ր.
ԱՐԾՐՈՒՆԻ Վ., բժշկ., Աղջիկ (Առողջապահական և բարոյագիտական էտիւդ) պատկերներով, Թիֆլիս, 1903 թ. գ. 60 կ.
ԴՈՒՐԲԱԽԵԱՆ Ց., Մանօթ պատկերներ (երեցփոխների, եկեղեցու ապաստարների կեանքից), Պետերբուրգ, 1903 թ. գ. 75 կ.
ՍԱՐԴԱՐԵԱՆ-ԱՐԵՒՇԱՏԵԱՆ Ա., Երազ կամ Օսկան Պետրովիչ Եղեմում, Ֆէյերիա 1 գործողութեամբ, Թիֆլիս, 1903 թ. գ. 20 կ.
Նոյն տեղը վաճառվում են բոլոր ուսումնարանների համար դասագրքեր։
Դիմել Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (ռ. կ. չ.) 3—5

**Լ. Փ. ԿՆԻՆԱՅԻ**
**ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ**
(Михайловскій пр., д. Сливицкой, № 81)
Ընդունելութիւնը սկսված է սեպտեմբերի 1-ից, իսկ պարապմունքները—սեպտեմբերի 9-ին։ Գիտնոի դասանդութիւնը։
Մասնագիտութիւնը։ Պարտադիր երաժշտութիւններ։ Ուսարտոները ստանում են վկայական և իրաւունքներ։
«Էֆենդի Կնինայի „УНИВЕРСАЛЬНЫЯ УПРАЖНЕНІЯ“ գիրքը, որ հաշուում ամենալաւ ձեռնարկ դաշնամուրի տեխնիկայի համար և որը ընդունված է արտասահմանեան կոնսերվատորիաներում և յայտնի երաժշտական ուսումնարաններում, կարելի է գտնել Ռուսաստանի բոլոր երաժշտական խանութներում, իսկ Թիֆլիսում Լ. Փ. Կնինայի երաժշտական ուսումնարանում։
Ուշադրութիւն պէտք է դարձնել վերնագրի վրա՝ „Универсальныя упражненія“.
Գինն է 1 Ր. 50 կ.
(կ. չ.) 4—4

**Մանկական պարտէզ, ուսումնարան եւ պանսիօն**
**Ս. Պ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ**
Բագու
Օգոստոսի 15-ից տեղափոխվեց նոր ընակարան—Губернская ул. д. Бр. Красильниковыхъ, հայոց եկեղեցու մօտ։
Ընդունելութիւնը սկսված է։ 2—8

**SELIAN HOWARD Co.**
№ 5, bhatham Row. Boston Mass. U. S. A.
Պատիւ ունինք ծանուցանել ռուսահայ հասարակութեան և այլոց, թէ տարիներէ ի վեր Աւետիս Գ. Սէլեան և ընկ. անուամբ շարունակված վաճառականական և յանձնարարական տունն՝ Բոստոնի պատուոր ընտանիքի մը անդամներէն փոքրաւոր և բարձր նկարագրի տէր Ար. Զարլզ Հ. Հավրդի ընկերակցութեամբ վերակազմված է և պիտի շարունակվի ներկայ անունով։ Ընկերութիւնս որոշած լինելով իր վաճառականական յարաբերութիւնները ընդարձակել ի Ռուսաստան ևս, հարկ համարած է այս յայտարարութիւնը դնել «Մշակում», որոնք որ մշակել կուզեն գործի յարաբերութիւն Ամերիկայի հետ՝ կրնան դիմել մեզ, պատրաստ ենք մանրամասն տեղեկութիւններ հաղորդել ո և է պահանջված ապրանքի վրա և հաղորդել մեր պայմանները։ Տեղի հեռաւորութիւնը ի նկատի ունենալով հաստատած ենք դրամատնական յարաբերութիւններ և դիւրութիւններ։ Աւելորդ չի լինի յիշել, թէ հետևեալ ապրանքներ և չատ մը այլք կրնան շահաւոր կերպով արտածվել հոս. բուրդ, մորթ, մուշտակ, ոչխարի աղիք, ընկուզեղէնք, արևելեան գորգեր և այլն և այլն. ներածվին՝ կտաւ, սուրճ, երկրագործական և այլ մեքենայք, երկաթեղէն իրեր և այլն և այլն։
ԲՕՍՏՕՆ ԱՄԵՐԻԿԱ. ՍԵԼԵԱՆ—ՀԱՎՐՏ ԸՆԿ.
3—10

**Ս.-Պետերբուրգի „ՆԱԴԷԺԴԱ“ Ընկերութեան**
Վարչութիւնը որանով յայտարարում է, որ նա ապրանքներ փոխադրելու և ապահովագրական գործողութիւնների համար բաց է արել գրասենեակներ Պարսկաստանի հետևեալ քաղաքներում.

1) Աստարա.
2) Արդաբիլ.
3) Թավրիզ.
4) Մարաղա.
5) Սաուջբուլաղ.
6) Ուրմիա.
7) Սալմաստ.
8) Խոյ.
9) Պարսից Զուլֆա.
10) Շախտախտի.
11) Էնզէլի.
12) Պիր Բազար.
13) Ռէշտ.
14) Կազվին.
15) Թէհրան.
16) Կում.
17) Կաշան.
18) Իսֆահան.
19) Համադան.
20) Քիրման.
21) Եզդ.
22) Մէշէդիսէր.
23) Սարի.
24) Բարֆէրուշ.
25) Ամոլ.
26) Բէնդէր-Գեազ.
27) Աստրաբադ.
28) Բասրա.
29) Շախրուդ.
30) Սաբզէվար.
31) Միան-Աբադ.
32) Բուժնուրդ.
33) Շիրվան.
34) Կօչան.
35) Մամէդ-Աբադ (Դէրէգեզում).
36) Արարկ.
37) Մէշէդ.
38) Նիշապուր.
39) Թուրբէթ-է-Խէյդարի.
40) Թուրշիզ.
41) Խաֆ.
42) Թուն.
43) Կային.
44) Բիրջան.
45) Նուսրէթ-Աբադ (Սէիստանում).
10—10

Дозволено Цензурою. Тифлисъ, 21 Сентября 1903 г.
Электропечатня Груз. Изд. Т—ва, Б. Ванкская ул.